

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ.
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 04-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Վանաձոր համայնքի ավագանու 2017թ. հոկտեմբերի 04-ի արտահերթ նիստի օրակարգը.

1. Վանաձոր համայնքի ավագանու 2017թ. հոկտեմբերի 04-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Մ.Ասլանյան

2. Ռայներ Քոզելին «Վանաձորի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին

զեկ.՝ Մ.Ասլանյան

ՌԱՅՆԵՐ ՔՈՂԵԼԻՆ «ՎԱՆԱԾՈՐԻ ՊԱՏՎԱԿՈՐ
ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Կարեն Նազարյանի թիվ 1101/08238 գրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, Վանաձոր համայնքի ավագանու 2013թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 70-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգով, համայնքի ավագանին որոշում է՝

Ռայներ Քոզելին շնորհել «Վանաձորի պատվավոր քաղաքացի» կոչում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԲԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
 MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

10.8.2017
 1101/08238

ՎԱՆԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
 ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ասլանյան,

Տեղեկացնում ենք, որ ս.թ. սեպտեմբերի 19-29-ը Հայաստան կայցելի Վյուրցբուրգ քաղաքում գործող «Ինտերկապ» գերմանական բարեգործական ընկերության նախագահ, «Ռայխարթ&Քոզել» ընկերության համասեփականատեր Ռայներ Քոզելը:

Ռ. Քոզելի բարեգործությունը Հայաստանում սկսվել է Սպիտակի երկրաշարժից հետո: Տարիներ շարունակ Ռ. Քոզելը աջակցություն և օժանդակություն է ցուցաբերում Վանաձորի Տարեցների տանը, երեխաների խնամքի եւ պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատությանը, թիվ 13 դպրոցին, կազմակերպում հայ ուսանողների, արվեստագետների այցելություններ Գերմանիա՝ փորձի փոխանակման նպատակով, ինչպես նաև ճամփորդություններ Հայաստան: 2016թ. վերջինս Վյուրցբուրգ քաղաքում հիմնադրել է հայկական կիրակնօրյա դպրոց: «Ինտերկապ» գերմանական բարեգործական ընկերությունն ակտիվ համագործակցում է «Ինտերկապ» հայկական ընկերության հետ:

Հաշվի առնելով Ռ. Քոզելի երկար տարիների բարեգործական գործունեությունը Հայաստանում և շարունակական կապը Վանաձորի հետ՝ առաջարկում ենք Ռ. Քոզելին շնորհել «Վանաձորի պատվավոր քաղաքացի» կոչումը:

Խնդրում ենք կայացված որոշման մասին հայտնել ԱԳՆ:

Հարգանքով՝

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ԿԱՐԵՆ ՆԱԶԱՐՅԱՆ

Եվրոպայի վարչություն
 Երկկողմ հարաբերությունների առաջին բաժին
 Հեռ.060 620 654

295-հրկայքինե. /

ՀՀ Լոռու մարզ
 Վանաձորի մարզպետարան
 16 08 17
 Մասն. 061 Կարձ 575